ARLIS

Համարը	N 1271-Ն	Տեսակը	Մայր
Տիպը	Որոշում	Կարգավիճակը	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2006.09.27/50(505) Հոդ.1042	Ընդունման վայրը	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը	31.08.2006
Ստորագրող մարմինը	ՀՀ Վարչապետ	Ստորագրման ամսաթիվը	09.09.2006
Վավերացնող մարմինը	ՀՀ Նախագահ	Վավերացման ամսաթիվը	15.09.2006
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	28.09.2006	Ուժը կորցնելու ամսաթիվը	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
15 սեպտեմբերի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 օգոստոսի 2006 թվականի N 1271-Ն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի «ժ» կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպող մանկավարժների աշխատանքի վարձատրության արտոնյալ պայմանների հաշվարկման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2006 թ. սեպտեմբերի 9
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2006 թվականի

Կ Ա Ր Գ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպող մանկավարժական աշխատողների գործող դրույքաչափերին, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատուկ կրթական հաստատություններին նախատեսված հատկացումների սահմաններում, Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի հաշվարկների հիմքում դրված հատուկ կրթական հաստատությունների մանկավարժների համար հաշվարկված միջին ամսական աշխատավարձի 10 տոկոսի չափով սահմանվում է լրացուցիչ հավելավճար՝ հետևյալ առանձին աշխատանքների համար՝

գրավոր աշխատանքների ստուգում,

հաշվողական տեխնիկայի սպասարկում,

կաբինետի, լաբորատորիայի վարիչություն,

առարկայական մեթոդմիավորման, ցիկլային աշխատանքների ղեկավարում:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**